

«ՀԱՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտոր



Հովհաննես Հովհաննիսյան

«27» 08 2023թ.

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Քնարիկ Ներսեսի Առաքելյանի «**Անձի ներընտանեկան զոհայնացման հոգեբանական առանձնահատկությունները**» ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է թերևս ամենախոցելի հասարակական խնդրին՝ երեխայի զոհականացման ձևավորման նախադրյալներին և հետևանքներին: Այս հիմնախնդիրը ոչ միայն արդիական է, այլև հրատապ մեզանում տիրող և դեռևս չնահանջող «բռնության մշակույթի» արմատացման պայմաններում: Երեխայի զոհականացման խնդիրը նաև ունիվերսալ խնդիր է, քանզի զարգանում է կրթվածության պակասի, անբարենպաստ պայմանների, աղքատության ֆոնին, առանձին մարդկանց դեստրուկտիվ վարքագծի արդյունքում և արտացոլում է հասարակության արատները:

Ցավոք, անձի զոհականացման խնդիրը բավականաչափ շատ չի ուսումնասիրվում մեզանում, անգամ եթե ուսումնասիրվում է, ապա չի ունենում այն կարևոր նշանակությունը կիրառական իմաստով: Տարբեր կարծիքներ կան այն մասին, թե մեր հասարակության մեջ որքան տեսանելի է այդ խնդիրը: Հաճախ մեր ազգային մենթալիտետը թույլ չի տալիս ուղղակիորեն առնչվել երեխաների բռնության հարցերին՝ պաշտպանելով մեզ՝ ընտանիքին առնչվող արժեքահամակարգի խարխալումից: Սակայն, ինչպես և ամենուրեք, այդ խնդիրը արժանի է առաջնային ուշադրության, քանի որ կապված է երեխաների իրավունքների, զարգացման և արժանապատիվ քաղաքացի դառնալու հետ:

Հիմնախնդիրը ինքնին բարդ է ուսումնասիրման համար՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով: Առաջին դժվարությունը նրանում է, որ երեխայի զոհականացման գործոնները բազմաշերտ են և փոխկապված: Դրանց մեջ կարելի է առանձնացնել մշակութային, սոցիալական, տնտեսական, իրավական, հոգեբանական գործոններ, ինչը ենթադրում է միջառարկայական մոտեցում խնդրին: Երկրորդ դժվարությունը կապված է հիմնախնդրի մեթոդաբանության մշակման հետ. հաճախ անհրաժեշտ է լինում ուսումնասիրել երեխաների սուբյեկտիվ փորձառությունը օբյեկտիվ մեթոդակազմից զատ, որի դեպքում պետք է ուշադիր և խորաթափանց լինել այն մեկնաբանելիս: Հաջորդ, բայց ոչ վերջին խնդիրը, որը կարելի է առանձնացնել, զոհականացման հայեցակարգային մոտեցումների տարբերություն է, տարբեր դիսկուրսների միջով անձի զոհականացման պատճառների և հետևանքների մեկնաբանումը և հասկացումը:

Հակիրճ ներկայացնելուց հետո սույն հիմնախնդրի արդիականությունը՝ անցնենք ատենախոսության հիմնական դրույթների քննարկմանը: Ատենախոսության հիմքում ընկած է երկու հիմնական հարցադրում. որքանո՞վ ներընտանեկան մթնոլորտը և ծնող-երեխա փոխհարաբերությունները ունենում են ազդեցություն երեխայի զոհայնության դրսևորման վրա, և որքանո՞վ զոհայնության ձևերը կապված են սեռային բնութագրերի հետ: Այս հարցադրումների վրա կառուցվում է ատենախոսության բովանդակությունը ու իրականացվում է արդյունքների վերլուծություն:

Աշխատանքի առաջին գլխում անդրադարձ է արվել զոհայնության հիմնախնդրին, դիտարկվել են ինչպես հասարակագիտական, այնպես էլ հոգեբանական ասպեկտները: Մանրամասն քննարկվել է զոհաբանության որպես առանձին գիտակարգի ձևավորման հարցերը, ուսումնասիրությունների մեթոդաբանության մոտեցումները: Քննարկվել են տարբեր տեսություններ, հայեցակարգեր անձի զոհայնության վերաբերյալ՝ ուշադրություն դարձնելով նաև սովյալ խնդրի կանխարգելիչ կողմերին:

Աշխատանքի երկրորդ գլխում հանգամանորեն վերլուծվում են անձի զոհայնության և զոհային վարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Արժեքավոր է այսպիսի համակարգային վերլուծությունը, երբ դիտարկվում են ինչպես մակրոգործոններ, այնպես էլ միկրոգործոններ: Հատուկ ուշադրության է արժանանում անձի սոցիալականացման ընթացում զոհայնության նպաստող գրեթե բոլոր գործոնները:

Աշխատանքի երրորդ գլխում ատենախոսը ներկայացնում է ուսումնասիրության մեթոդաբանությունը: Մանրամասն ներկայացվում է ուսումնասիրության փուլերը, գործիքների տեղայնացումը, գործիքակազմը, ներկայացված են և հիմնավորված են նաև սովյալների

վերլուծության մեթոդները: Մանրամասն ներկայացված է նաև ընտրանքի հավաքագրման սկզբունքները և սեռատարիքային բաշխումը:

Աշխատանքի չորրորդ գլխում արդեն ներկայացվում է արդյունքների վերլուծությունը: Տվյալների վերլուծությունը և մեկնաբանումը սկսվում է հետազոտության մասնակիցների սոցիալ-դեմոգրաֆիական և ներընտանեկան բնութագրերի վերլուծությունից: Գիտարկվում են ներընտանեկան մթնոլորտի և դաստիարակության, ինչպես նաև վաղ մանկության բռնության փորձառությունը: Այնուհետև իրականացվում է սեռային համեմատություն ըստ անչափահասների հոգեբանական բնութագրերի, ծնող-երեխա փոխհարաբերությունների առանձնահատկությունների: Արդյունքների վերլուծությունը ավարտվում է գոհային վարքի հակվածության և անձնային առանձնահատկությունների միջև փոխհարաբերակցության վերլուծությամբ: Արդյունքում ատենախոսը հանգում է մի շարք արժեքավոր եզրակացությունների:

Աշխատանքը ամբողջական է իր տրամաբանության և շարադրանքի մեջ. ընտրված մեթոդակազմը և վերլուծության մեթոդները համապատասխանում են առաջ քաշված խնդիրներին, վարկածին, իսկ պաշտպանությանը ներկայացվող դրույթները բխում են եզրակացություններից: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Ծանոթանալով ատենախոսության հիմնական դրույթներին՝ ունենք նաև որոշ դիտողություններ և ցանկություններ:

1. Գտնում ենք, որ նորույթի մեջ ձևակերպված առաջին կետը չի համապատասխանում գիտական նորույթի ընդունված սահմանմանը: Գիտական նորույթ ենք ձևակերպում այն վերջնարդյունքը, ինչը դուրս է բերվել ուսումնասիրության արդյունքում, ոչ թե այն, թե ինչ ենք իրականացրել, եթե խոսքը չի վերաբերում, իհարկե, որևէ ծրագրի ներդրմանը:

2. Աշխատանքի մեջ տեսամեթոդաբանական հիմքը մեծամասամբ կազմում էին ռուս գիտնականների աշխատանքներ: Ցանկալի կլիներ, որ գրականության վերլուծության մեջ ներառվեին նաև այլ օտարազգի գիտնականների աշխատանքներ, ինչը հնարավորություն կտար տարբեր կողմերից, տարբեր հայեցակարգային մոտեցումների ներքո դիտարկել անձի գոհականացման խնդիրը: Մասնավորապես, եթե շեշտը դրվում էր ներընտանեկան մթնոլորտի և ծնող-երեխա փոխհարաբերությունների վրա, վաղ մանկության ժամանակ բռնության ենթարկման գործոնի վրա, ցանկալի կլիներ, որ ներկայացվեին նաև զարգացման տրավմատիկացիային (developmental trauma) վերաբերող այլ ժամանակակից հայեցակարգեր: Այս տեսանկյունից, անձի գոհականացման երևույթի սահմանումը կարելի էր զարգացնել՝ համեմատելով այլ երևույթների

հետ, օրինակ՝ անձի տրավմատիզացիա, բուլինգ և այլն, ավելի լավ պատկերացնելու և առանձնացնելու անձի զոհայնացումը այլ երևույթներից:

3. Նշվում է, որ կիրառվող մեթոդիկաները, մասնավորապես «Մեծ հնգյակ» և զոհային վարքի հակվածության հարցարանը, ենթարկվել են տեղայնացման հայերեն լեզվով: Ողջունելի է, որ իրականացվել է մեթոդիկաների թարգմանության ճիշտ և զրազետ ընթացակարգը, սակայն որպես նվազագույն պահանջ, ցանկալի կլիներ, որ ստուգվեր սանդղակների ներքին հուսալիությունը: Միջազգային պրակտիկայում սանդղակների ներքին հուսալիության ստուգումը ներկայացվում է նկարագրական վիճակագրության հետ մեկտեղ:

4. Աշխատանքում բացակայում էր տեղեկացված համաձայնագրի ձևանմուշը կամ հիշատակումը, առ այն, որ մասնակիցները (կամ ծնողները, խնամակալները) տեղյակ էին ուսումնասիրության նպատակներին, իրենց ներկայացվող հարցադրումներին և պատրաստ էին մասնակցել հետազոտությանը, ինչպես նաև վկայություն այն մասին, որ հետազոտությունը չի պարունակում ոչ մի տեսակի ռիսկ մասնակիցների համար, եթե նրանք հրաժարվեն կամ կիսատ թողնեն հարցումը: Միջազգային պրակտիկայում ընդունված է էթիկական հանձնաժողովի որոշումը առ այն, որ ուսումնասիրությունը իրականացվում է՝ հաշվի առնելով մարդու իրավունքների դրույթները և անվտանգ է մասնակիցների համար: Մեզանում դեռ չկան այդ ինստիտուտները, սակայն տեղեկացված համաձայնագրի կիրառումը և ձևանմուշի կցումը պարտադիր պահանջ է:

Բոլոր այս դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի հետազոտական արժեքը, սակայն դրանք ցանկալի է ընդունել ի գիտություն և հաշվի առնել հետագա աշխատանքներում:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քնարիկ Ներսեսի Առաքելյանի «**Անձի ներընտանեկան զոհայնացման հոգեբանական առանձնահատկությունները**» ԺԹ.00.01 «*Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն*» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն և ավարտուն աշխատանք է, որն ունի տեսական և կիրառական նշանակություն: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ Քնարիկ Ներսեսի Առաքելյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.01 «*Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն*» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի 23.08.2023թ. նիստում (արձանագրություն N 1), որին մասնակցել են ամբիոնի վարիչ, հ.գ.թ., Ն. Խաչատրյանը, դոցենտներ՝ հ.գ.թ. Ի. Խնամիրյանը և հ.գ.թ. Լ. Բաղդասարյանը, հ.գ.թ. Ա. Հակոբջանյանը, հ.գ.թ. Ս. Խաչիբաբյանը, դասախոս Լ. Աղաբեկյանը, գործավար՝ Ա. Պողոսյանը:

ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ՝

հ.գ.թ., դոցենտ

Ն. Խաչատրյան

Հաստատում եմ հ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտական քարտուղար՝ Բ. Գ. Թ. դոցենտ

Մերի Հովհաննիսյան

«24» 08. 2023թ.

